

ՀԱՐՑՈՒՄ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ մատուցվող ծառայության որակի հետ կապված հարցում է իրականացրել մայրաքաղաքի Արաբկիր և Էրեբունի համայնքների, Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի և Արմավիրի մարզի Սարդարաբադ գյուղի շուրջ 705 բնակիչ-բաժանորդների հետ/ 16-18 օգոստոսի/:

| | |
|------------------------------|-------------|
| Արաբկիր համայնք | 150 հարցված |
| Էրեբունի համայնք | 100 հարցված |
| ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան | 345 հարցված |
| Արմավիրի մարզ, գ. Սարդարաբադ | 110 հարցված |

Հարցման արդյունքների համաձայն, հարցվածների 50,7 % -ը Ընկերության կողմից մատուցվող ծառայության որակը գնահատել է լավ 43,4 % -ը բավարար, 5,2 % -ը անբավարար:

Մատուցվող ծառայության նկատմամբ Ձեր վերաբերմունքը

| | | |
|-----------|-----|--------|
| լավ | 358 | 50,7 % |
| բավարար | 306 | 43,4 % |
| անբավարար | 37 | 5,2 % |

Բնական գազի մատակարարման և օգտագործման անվտանգության կանոններին, Մատակարար-սպառող իրավահարաբերություններին, իրավունքներին ու պարտականություններին որքանով են բնակիչ-բաժանորդները տեղյակ, հարցվածների 86,6 %-ը պատասխանել է դրական: 12,2 %-ը նշել է անբավարար տեղեկացվածության մասին:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների և իրավահարաբերությունների վերաբերյալ տեղեկացվածությունը

| | | |
|-----------------------------|-----|--------|
| Բավարար տեղեկացվածություն | 611 | 86,6 % |
| անբավարար տեղեկացվածություն | 86 | 12,1 % |

Դիմումատուի հարցին կամ խնդրին լուծում տալը հարցվածների 71,6 %-ը համարում է որ կատարվում է ժամանակին, 8,2 %-ը գտնում է որ անհարկի ձգձգվում է:

Դիմումատուի հարցին կամ խնդրին լուծում տալու ժամանակահատվածը

| | | |
|-----------------------|-----|--------|
| Կատարվում է ժամանակին | 505 | 71,6 % |
| անհարկի ձգձգվում է | 58 | 8,2 % |

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ- ի կողմից իրականացվող ակցիաները որքանով են մատչելի, հարցվածների 50 %- ը նշել է, որ օգտվել է ձձ հազար դրամ կանխավճարի գեղչի արտոնությունից: Ընդ որում , ապրիլի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը ներառյալ, հանրապետությունում առանց կանխավճարը մուծելու բաժանորդ է դարձել 30000 բնակիչ: Այդ թվում Երևանում 13186, Արմավիրում 471, Աբովյանում 1450: Ներտնային շինահավաքակցման աշխատանքների համար բանկերի կողմից տրամադրվող վարկային միջոցներից օգտվել են հարցվածների 6,8 %- ը կամ 48 բաժանորդ:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ –ի կողմից իրականացվող ակցիաների մատչելիությունը

| | | |
|-------------------------------|-----|-------|
| 40 հազար դրամ կանխավճարի գեղչ | 353 | 50 % |
| Վարկերի տրամադրում | 48 | 6,8 % |

1-04 ծառայության աշխատանքի օպերատիվության հետ կապված, հարցվածների 48,3 %- ը գտնում է , որ արագ են արձագանքում, 7,3 %- ի կարծիքով՝ արագ չեն արձագանքում: Հետևաբար ծառայությանը դիմել է հարցվածների 55,6 %- ը: Մնացած հարցվածները չեն դիմել ծառայությանը:

1-04 ծառայության օպերատիվությունը

| | | |
|----------------------|-----|--------|
| արագ են արձագանքում | 341 | 48,3 % |
| արագ չեն արձագանքում | 52 | 7,3 % |

Ինչ վերաբերում է ծառայություն մատուցող աշխատակիցների մասնագիտական որակավորմանը և դրսևորած վերաբերմունքին, ապա հարցվածների 85,9 %-ը պատասխանել է , որ ուշադիր են և փորձում են օգնել, 5,6 %- ի կարծիքով՝ բարեհամբյուր չեն, իսկ 1,2 %-ը չի ճանաչում աշխատակիցներին:

Ծառայություն մարուցող աշխատակիցների մասնագիտական որակավորումը և դրսևորված վերաբերմունքը

| | | |
|-------------------------------|-----|--------|
| ուշադիր են և փորձում են օգնել | 606 | 85,9 % |
| բարեհամբյուր չեն | 40 | 5,6 % |
| չենք ճանաչում | 11 | |

Առաջարկությունները կամ բողոքները հիմնականում վերաբերվում են բնական գազի բարձր համարվող սակագնին, ներտնային տեխնիկական սպասարկման ծառայության աշխատանքներին և վարձավճարներին, գազանջատումների մասին տեղեկատվությանը: